Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Վարդանիձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (3-**րդ դաս. 18 դասաժամ) և մաթեմատիկայի** (5 **դասաժամ**), **տեխնոլոգիայի (խումբ1՝** 3 **դասաժամ**, **խումբ2՝** 1 **դասաժամ), երաժշտության** (2 **դասաժամ), կերպարվեստի**
(2,5 **դասաժամ**) **ուսուցչի թափուր տեղերի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ապրիլի 17 -ից մինչև մայիսի 2-ը ներառյալ, ամեն օր ՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024 **թվականի մայիսի 8-ին՝ ժամը** 15:00-**ին**, ՀՀ Սյունիքի մարզի Վարդանիձորի միջնակարգ դպրոցում, հասցե՝ Մեղրի համայնք, գ. Վարդանիձոր 3-րդ փողոց, 20 շենք:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (098)919 719 , (077)960 771 հեռախոսահամարներով: